ՊԱՏՄԱԿԱՆ

ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՔՎԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 1918 ԹՎԱԿԱՆԻՆ

Պատմության մեջ անուններ շատ կան, որոնք դեռ մնում են չբացահայտված, կամ էլ ծածկված պատմական կեղծ փոշիով, անուններ, որոնք ժամանակին մեծ դեր են խաղացել հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Իր բազմադարյան պատմության մեջ հայ ժողովուրդը բազմաթիվ հերոսներ է ունեցել, որոնցից շատերի անուններն ու գործունեությունը ենթակա են պատմական լուրջ ուսումնասիրության:

Վերաարժեքավորելով այսօր հայ հոգևոր, հասարակական և քաղաքական գործիչների գործունեությունը Բաքվի նահանգում 1918 թվականի թուրք-մուսավաթականների արշավանքի ժամանակ, հարկ է նշել, որ հայության համար դժնդակ այդ օրերին իր մեծ ներդրումն ունեցավ նաև Բաքվի նահանգի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանը, որը 1913 թվականին Տ. Տ. Գևորգ 5-րդ Սրբազնագույն Կաթողիկոսի կողմից ձեռնադրված լինելով եպիսկոպոս[1], 1916 թվականին նշանակվում է Բաքվի նահանգի Շամախիի թեմի առաջնորդ՝ փոխարինելով Կապպատեան եպիսկոպոսին[2]: Բագրատ եպիսկոպոսի հոգևոր-հասարակական գործունեության խոսուն վկաներն են նրա պաշտոնական զեկուցագրերն ու հայտարարությունները՝ ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ 5-րդին, սեյմում գինվորական հայ ներկայացուցիչ Պարույր Լևոնյանին*, զեկուցագրերն ու բողոք-նամակները՝ հասցեագրված Ադրբեջանի կառավարության նախագահ ֆ. Խան Խոյսկուն, մուսուլմանական կովկասյան բանակի գերագույն հրամանատար Նուրի փաշային, ներքին գործոց նախարար Ջիվանշիրին, Բաքվի շրջանի դպշնակից զորքերի հրամանատար գեներալմայոր Թոմսոնին, ինչպես նաև նրա նամակները՝ ուղղված Էջմիածնի Սինոդի անդամ եպիսկոպոսին և պաշտոնատար այլ անձանց:

Նամակներն ու զեկուցագրերը, իրենց մեջ պարունակելով հարուստ պատմական նյութեր, նոր լույս են սփռում ինչպես տվյալ ժամանակաշրջա-

---

[1] «Հորիզոն», 1913 թ. սեպտեմբերի 18, թիվ 208:

[2] ՀՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 14, գործ, 298, թ. 78:

* Աշուղ Ջիվանու 2-րդ զավակը: Ավարտել է Ներսիսյան դպրոցը, այնուհետև՝ Պետերբուրգի իրավաբանական և կոնսերվատորիայի երգեցողության բաժինները: Հարել է Հ. Յ. Դ.-ին: Հեղափոխությունից հետո Կովկասում զանազան պաշտոններ վարելուց հետո, 1921 թ. մեկնում է արտասահման և հիմնում «Նոր արշալույս» թերթը: Մահացել է 1934 թ.:

ջանի պատմության վրա, այնպես էլ Է՛լ ավելի մոտիկից ծանոթացնում Բագրատ եպիսկոպոսի հակասություններով լեցուն հոգևոր և հասարակական գործունեությանը Բաքվի նահանգում թուրք-մուսավաթական արշավանքների ընթացքում:

Բագրատ եպիսկոպոսի հասարակական-քաղաքական գործունեությունը սկսվում է դեռևս 1917 թվականից, երբ Տ. Տ. Գևորգ 5-րդ Կաթողիկոսի կողմից նա լիազորվում է մասնակցելու փետրվարյան հեղափոխությունից հետո Թիֆլիսում իր աշխատանքներն սկսած հայոց ազգային համախորհրդակցությանը[3]: Համախորհրդակցությունը, որի հրավիրման նպատակն էր՝ լուծել հեղափոխությունից հետո ծագած լուրջ քաղաքական խնդիրները, ունեցով պատմական մեծ նշանակություն հայության հետագա կյանքում: Նրա աշխատանքներին իր ակտիվ մասնակցությունը ցուցաբերեց նաև Բագրատ եպիսկոպոսը՝ ընդգրկված լինելով դպրոցների ազգայնացման և ազգային ծխական ու հոգևոր դպրոցների դրության հարցերը մշակելու համար ստեղված հանձնախմբում[4]: Համախորհրդակցությունը, վերջացնելով իր աշխատանքները, ընտրում է երկու ղեկավար մարմին՝ Ազգային ժողով և գործադիր մարմին՝ Ազգային խորհուրդ՝ բաղկացած կուսակցական ներկայացուցիչներից, թվով 15 հոգի (նախագահ՝ Ա. Ահարոնյան)[5]: Ազգային խորհրդի կազմում համախորհրդակցությունը, չընդգրկելով հոգևոր ներկայացուցիչներին, դժգոհություն է առաջ բերում Բագրատ և Մեսրոպ եպիսկոպոսների մոտ, որոնք բողոք-նամակով դիմում են նախագահությանը՝ հայտնելով իրենց դժգոհությունը այն մասին, որ «Ներկա ազգային համախորհրդակցությունը իրավատեր չէ այդպես վարվելու, որի դեմ բողոքում ենք»[6]: Հետագայում Ազգային խորհրդի մասնաճյուղեր ստեղծվեցին Բաքվում (նախագահ՝ Ա. Բ. Գյուլխանդանյան)[7] և Երևանում (նախագահ՝ Խորեն եպիսկոպոս)[8]:

Փետրվարյան հեղափոխությունը և նրան հաջորդած հոկտեմբերյան հեղաշրջումը, որոնք զարկ տվեցին Ռուսաստանի ժողովուրդների քաղաքական կյանքին և ազգային ինքնագիտակցության բարձրացմանը, ունեցան բացասական ազդեցություն շարունակվող առաջին աշխարհամարտի պատերազմական հետագա գործողությունների վրա: «Հեղափոխական տրամադրությունները իրենց արձագանքները գտան նաև ռազմաճակատում, որից և զինվորները, թողնելով ռազմաճակատի իրենց դիրքերը, վերադառնում էին տուն»[9]: Զանգվածային դասալքությունը առանձնապես վատ անդրադարձավ ինչպես Արևմտյան, այնպես էլ Կովկասյան ճակատների վրա: «Կովկասյան ճակատի արագ մերկացումը,—գրում է Զարևանդը,—մեծ շնորհ էր Թուրքիայի համար, որը, կարճ ժամանակամիջոցում վերակազմավորելով իր ուժերը, փորձեց իրագործել իր վաղեմի պանթուրքիստական ծրագրերը»[10]: Դրան էին նպաստում նաև մուսուլման քարոզիչների աշխատանք-

---

[3] «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1992 թ., թիվ 1—2, էջ 109:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, էջ 104:
[6] «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1992 թ., թիվ 1—2, էջ 150:
[7] **Ս. Վրացյան,** Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 157:
[8] **Վ. Սրկ. Տերտերյան,** Խորեն Ս. Մուրադբեկյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը, «Էջմիածին», 1994, ապրիլ-մայիս, էջ 71:
[9] ՀՀՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 24:
[10] **Зареванд,** Турция и пантуранизм, Париж, 1930 г. стр. 112.

ները ճակատում՝ տարածելով այն լուրերը, թե իբր «Կովկասը անջատվել է Ռուսաստանից և պաշտպանվել նրան պետք չէ»[11]: Բագրատ եպիսկոպոսը կաթողիկոսին ուղղված զեկուցագրում գրում էր. «Այդ նույն ժամանակ, թուրքական գործիչները «մուսավաթ կուսակցության հետ դաշնակցած, ջանք չէին խնայում թուլացնելու Կովկասյան ռազմաճակատի պաշտպանության գործը և խանգարում էին Արևմտյան ճակատից եկող հայ զինվորներին Անդրկովկաս մտնելուն»[12]: «Հորիզոնը» այդ օրերին գրում էր. «Բաքու-Թիֆլիս ճանապարհը փակել են թիկունքում անիշխանություն առաջ բերելու և ճակատի պաշտպանության գործը խանգարելու նպատակով»[13]: Ինչպես վկայում են վավերագրերը, բոլոր նման գործողությունները կատարվում էին ղեկավարության իմացությամբ և նրանց ցուցմունքներով: «Ղեկավարվելով Ելիզավետպոլում ստեղծված հասարակական անվտանգության կոմիտեի կողմից, թաթարական բանդաները հարձակվում էին Արևմտյան ճակատից վերադարձող վագոնների վրա և գազանաբար կոտորում հայ զինվորներին»[14]: Մյուս կողմից թիկունքում թուրքական զորքերը, առաջխաղացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով, մուսուլմանական բանդաներ՝ զենք ձեռք բերելու համար, հարձակվում էին Թիֆլիս-Ելիզավետպոլ երկաթգծով անցնող վագոնների վրա, որտեղ «անխնա կոտորեցին Կովկասյան ճակատից վերադարձող հազարավոր ռուս զինվորների, խլելով նրանցից մեծ քանակությամբ զենք»[15]: Այդ ընթացքում Արևմտյան ճակատներից մեծ քանակությամբ վերադարձող հայ զինվորները մոտ 10000 հոգի կուտակվել էին Բաքվում[16], որոնք հայոց ազգային խորհրդի ջանքերով և Համազասպի գլխավորությամբ վերակազմավորվել էին և պետք է մեկնեին Կովկասյան ճակատ՝ այն պաշտպանելու թուրքական սպասվող արշավանքից, սակայն վերոհիշյալ պայմաններից ելնելով զորքերը մնացին Բաքվում և իրենց մեծ ներդրումն ունեցան հետագայում Բաքվի հերոսական պաշտպանությանը[17]: Բաքվի նահանգում, որն ուներ 36302 քառ. կմ տարածություն[18], 1915 թվականի վիճակագրական տվյալների համաձայն կար շուրջ 120117 հայ ազգաբնակչություն[19]: Նահանգի հայաշատ գավառներն էին՝ Շամախին՝ 22350 հայ բնակչություն, շրջապատված 117706 մահմեդականներով, Գյոկչան՝ 17207 հայ, շրջապատված 112624 մահմեդականներով: Քաղաքապետարանում հայ ազգաբնակչության թիվը հասնում էր շուրջ 75612՝ շրջապատված 152898 շիա և 29930 այուննի մահմեդականներով: Ռուս ազգաբնակչությունը նահանգում կազմում էր շուրջ 117234, մահմեդականները՝ մոտ 875402 հոգի»[20]: Նահանգում գործում էին մոտ 40 հայկական եկեղեցիներ[21], որոնցից 5-ը միայն Բաքու քաղաքում: Դրանք էին՝ Սուրբ Աստվա-

---

11 ՀՀՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 26, թ. 20ա:
12 ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 5—8:
13 «Հորիզոն», 1918, հունվարի 19, թիվ 15:
14 ՀՀՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 96:
15 ՀՀՊԿՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 117, թ. 2:
16 **Հ. Քաջազնունի,** Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 23:
17 ՀՀՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 24:
18 **М. С. Шапсович,** Весь Кавказь, Баку, 1914 г. стр. 6.
19 Кавказский календары на 1917 г. Тифлисъ, 1916 г. стр. 178—185.
20 Նույն տեղում:
21 ՀՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 13—48:

ճածին, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս, Սուրբ Թարգմանչաց և Սուրբ Հարություն եկեղեցիները[22]:

Չբավարարվելով Արևմտյան և Կովկասյան ճակատներից վերադարձող զորքերի վրա հարձակվելով, մուսուլմանական հրոսակները, դեռևս 1917 թվականի դեկտեմբերից սկսած, հարձակվում էին Նահանգի Շամախի, Լենքորան, Գյոկչա գավառների հայաբնակ գյուղերի վրա և ազգաբնակչությանը ենթարկում կոտորածների ու կողոպուտի: Մղձավանջային օրեր էր ապրում հատկապես Շամախի և Գյոկչա գավառի հայությունը, որտեղ, բացի կոտորածներից, նրանք ենթարկվել էին սովամահության[23]: Ելնելով այդ հանգամանքից, Բագրատ եպիսկոպոսը իր պարտքն է համարում նամակով դիմել Բաքվի մարդասիրական ընկերության նախագահ Տեր-Միքայելյանին, որտեղ, ներկայացնելով Շամախի և Գյոկչա գավառների հայության ծանր վիճակը, գրում էր. «Խնդրում եմ շտապ օգնություն ցույց տալ խեղճ տարրերին, կամ էլ ուղարկեք մեկ վագոն ալյուր աղքատ ընտանիքներին բաժանելու համար»[24]: Այդ նույն վիճակն էր տիրում և Լենքորանում, որտեղ իրեն նույնպես զգացնել էր տալիս սովը: «Հորիզոնը» գրում էր. «Լենքորանում դրությունը սոսկալի է: Բոլոր ճանապարհները փակ է: Հայությունը մատնվել է սովի»[25]: Շամախիում հայ-մուսուլմանական ընդհարումների տեղիք տվեց նաև այնտեղ տեղակայված կայազորի խնդիրը, որը ռուսական զորքերի հեռանալուց հետո Կովկասյան զինվորական իշխանության թույլատվությամբ տեղական հայ և մալական զինվորներից վերակազմվել էր այն[26]: Կայազորի նման կազմը մեծ վտահություն էր ներշնչում, որ այն կարող էր պահպանել Շամախի և շրջակա գավառների հայ ազգաբնակչության ֆիզիկական հետագա ապահովությունը: «Սակայն,—գրում էր Բագրատ եպիսկոպոսը կաթողիկոսին,—թուրքերին դուր չգալով նման կազմը, սկսեցին գումարել մի քանի ժողովներ և որոշեցին, որ իրենց միլիցիոներները ևս պետք է ընդգրկվեն գորնիզոնի մեջ և այդ նպատակին հասնելու համար նրանք (թուրքերը—Գ. Ն.) սկսեցին հրահրել ազգամիջյան բախումներ և հարձակվել գորնիզոնի զինվորների վրա»[27]: Բագրատ եպիսկոպոսը, տեսնելով նման ծանր վիճակը, որ ազգամիջյան լարվածությունը հասել է իր գագաթնակետին, իր նախաձեռնությամբ ստեղծվում է միացյալ հանձնախումբ, որի նպատակը պետք է հանդիսանար այն, որ «Վերջնականապես լուծել գորնիզոնի մեջ մուսուլմաններին ընդգրկելու խնդիրը, ինչպես նաև սպառվող հայ-թաթարական ընդհարումների կանխումը»[28]: Հանձնախումբը, որ բաղկացած էր հայերից, մալականներից, մուսուլմաններից և գորնիզոնի ներկայացուցիչներից, հաշվի առնելով Բագրատ եպիսկոպոսի հեղինակությունը գավառում և ողջ Նահանգում, ինչպես նաև նրա ծանոթությունները կովկասյան իշխանությունների հետ, նրան միաձայն ընտրում է նախագահ[29]: Հանձնախմբի մուսուլման ներկայացուցչի պնդմամբ և մյուս

---

[22] Նույն տեղում, թ. 5:
[23] ՀՀՊԿՊԱ, ֆ. 278, ց. 1, գ. 2, թ. 39:
[24] Նույն տեղում:
[25] «Հորիզոն», 1918, փետրվարի 19, թիվ 50:
[26] ՀՀՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 109, թ. 1—4:
[27] Նույն տեղում:
[28] ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. [illegible] գ. 193, թ. 6:
[29] ՀՀՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 109, թ. 4:

կողմից խուսափելով հայ-թաթարական սպասվող ընդհարումներից, հայ ներկայացուցիչները Բագրատ եպիսկոպոսի համաձայնությամբ որոշում են, որ «գորնիզոնի մեկ ոտան պետք է լինի քրիստոնյա, մյուսը՝ մահմեդական»[30]:

Մտահոգ Շամախիում հայ-թուրքական հարաբերությունների լարվածությունից, Բագրատ եպիսկոպոսը նամակով դիմում է սեյմի հայ զինվորական ներկայացուցիչ Պարույր Լևոնյանին՝ խնդրելով, որ նա միջնորդի Կովկասյան իշխանություններին, որպեսզի թույլ տրվի գավառի մեծ հայկական գյուղերում կազմակերպել հայկական պահեստային գումարտակ, որը պետք է պաշտպաներ հայկական թաղամասերը թուրքական հնարավոր հարձակումներից: Նամակում նա գրում էր. «Խնդրում եմ, չխնայեք Ձեր աջակցությունը և աշխատեք հաջողացնել շուտով, որպեսզի անմիջապես կազմակերպվի և հաջողության համար սկզբի մի երկու ամսվա գոնե նշանակիլ տալ մի հայ փոխգնդապետ կամ կապիտան այդ կողմերից: Այս միջոցը կլինի միակ հնարավորը հայ ազգաբնակչությունը թիկունքում պաշտպանելու համար ամեն տեսակ անախորժ կամ ծանր անակնկալներից և տաճկական դրդմամբ առաջ եկող խռովությունները»[31]: Ընդառաջելով Բագրատ եպիսկոպոսի խնդրանքը, Պարույր Լևոնյանի ջանքերով թույլ էր տրվում, որպեսզի Շամախիում կազմվի «մեկ բատալիոն, որը պետք է հանդիսանար Բաքվի գնդի մի մասը»[32]: Բագրատ եպիսկոպոսի հոգևոր-հասարակական գործունեությունը է՛լ ավելի ակտիվ բնույթ է կրում, երբ Բաքու քաղաքում և Շամախիում սկսվում են մարտյան իրադարձությունները, երբ մուսավաթականները Բաքվում փորձում էին գրավել իշխանությունը, իսկ հայաշատ գավառներում և հատկապես Շամախիում կազմակերպել հայկական կոտորածներ: Բաքվում, որ դեռևս հոկտեմբերյան հեղաշրջումից հետո հաստատվել էր խորհրդային իշխանություն, մահմեդականների կողմից ընդունեց մեծ դժկամությամբ: Թուրքաց ազգային խորհուրդը, ղեկավարվելով «Մուսավաթ» կուսակցության հրահանգներով, ջանք չէր խնայում գրավել իշխանությունը բոլշևիկներից: «Նպատակը պարզ էր,—գրում է Զարևանդը,—Մուսավաթը, կապստամբեր Բաքվի մեջ հաստատված խորհրդի դեմ, նպատակ ունենալով խլել իշխանությունը և հայտարարել Ադրբեջանի անկախությունը»[33]: «Իրադարձությունները Բաքվում» վավերագրերի հեղինակները, անդրադառնալով մարտյան իրադարձությունների պատճառներին, գրում են. «Բաքվում ծավալվեցին իրադարձություններ, որոնք կրում էին քաղաքական բնույթ: Բոլշևիկյան բանվորական զինվորական դեպուտատների խորհուրդը որոշեց վերցնել իշխանությունը իրենց ձեռքը և այդ հողի վրա տեղի ունեցավ զինված ընդհարում խորհրդային զինվորական մասերի և քաղաքի մուսուլմանական ազգաբնակչության միջև»[34]: Քանի որ բոլշևիկյան զորքի մեծամասնությունը կազմում էին Արևմտյան ճակատից վերադարձած, և Բաքվում կուտակված հայ զինվորները քաղաքացիական կռիվներին փորձելով տալ ազգային բնույթ, մուսուլմանական տարրերը սկսեցին

---

30 ՀՀՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 109, թ. 4:
31 Նույն տեղում, թ. 6:
32 Նույն տեղում, թ. 6:
33 **Զարևանդ,** Միացյալ և անկախ Թուրանիա, Երևան, 19[illegible]3, էջ 102;
34 ՀՀՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 96:

նահանգում տարածել այն ստահոդ լուրերը, թե իբր «բոլշևիզմը միայն դիմակ է և Բաքվի շարժումը կրում է զուտ ազգային հակաթուրքական բնույթ»[35]:

Զգալով վերահաս վտանգը, որ քաղաքացիական կռիվը կարող է վերածվել ազգամիջյան բախումների, որին որ ձգտում էին մուսուլմանները, «հայկական պաշտպանության շտաբից Համազասպը առաջադրանք է ստանում իր կամավորական գնդով պաշտպանել քրիստոնեական ազգաբնակչությանը թուրքական հնարավոր հարձակումներից»[36]: «Երեք օր Բաքվի փողոցներում բարիկադային կատաղի կռիվներ տեղի ունեցան, որին երկու կողմերից մասնակցում էին 20 հազարից ավելի մարդ»,—գրում է դեպքերին մասնակից Արսեն Սարգսյանը[37]: Համազասպը փայլուն կերպով կատարում է իր առաջադրանքը, որի արդյունքում ողջ խաղաղ քրիստոնյա ազգաբնակչությունը, որոնց մեջ նաև 14 հազար մուսուլմաններ, փրկվեցին կոտորածներից[38]: Ըստ Թորգոմ Վեհապետյանի, երեք օրվա այդ կռիվներում թուրքերը տվեցին 7 հազար, իսկ հայերը և ռուսները՝ 3 հազար զոհ»[39]: Ն. Ադոնցը, անդրադառնալով Բաքվում տիրող քաղաքական իրադրությանը, գրում էր. «Խորհրդային «Իզվեստիա» պաշտոնաթերթում ազգային գործով կոմիսար Ստալինը իր վրա հանձնարարություն է վերցնում հայտարարելու, որ մուսուլմանները ճանաչում են խորհրդային իշխանությունը, որը կազմակերպել էր Բաքուն և, որ ոչ մի պայքար մուսուլմանների և բոլշևիկների միջև չի եղել, ընկեր Ստալինը,—շարունակում է Ն. Ադոնցը,—անկասկած երազային մոլորության մեջ է: Նա պետք է ունենա արիություն արդարությամբ հայտարարի, թե որտեղ են ձգվում իրականում թաթարների հակայումս անգործյան այծերի հասարակ կաթը թանկ է բոլոր սոցիալիստական ուտելիքներից, որոնք մատուցվել են բոլշևիկների կողմից»[40]:

Բաքվում մղվող քաղաքացիական կռիվները իրենց արձագանքները գտան նաև նահանգի հայաշատ գավառներում և հատկապես Շամախիում: Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ 5-րդին հղած զեկուցագրում Բագրատ եպիսկոպոսը հանգամանալից ներկայացնում է դեպքերի սկսման պատճառները և Շամախիում տիրող ռազմա-քաղաքական վիճակը:

Արևմտյան ճակատից վերադարձող շամախեցի հայ զինվորները, ճանապարհները հայտնի պատճառներով փակ լինելով, կենտրոնանում են Բաքու քաղաքում: 1918 թ. փետրվար ամսից սկսած նրանք մոտ 300 հոգով փորձում են վերադառնալ իրենց գյուղերը, սակայն ապարդյուն: Թուրքերը զինված խմբերով հարձակվում էին նրանց վրա և թույլ չէին տալիս շարժվել Շամախի[41]: Նման իրավիճակից դուրս գալու նպատակով հայ զինվորները սկսում են ընդգրկվել բոլշևիկյան զորքերում, որպեսզի նրանց օգնությամբ բացեն ճանապարհները և վերադառնան տուն[42]: Մարտի կեսին

---

35 Նույն տեղում:

36 Նույն տեղում, թ. 2:

37 ՀՀՀՔԿՓՊԿԱ, ֆ. 4033, ց. 4, գ. 355, թ. 81:

38 ՀՀՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 99:

39 **Թ. Վեհապետյան,** Նոր սերունդը քավության նոխազ, Բեյրութ, 1966, էջ 121:

40 **Н. Адонц,** Турецкая ното и турецкая Армения. Լրաբեր հասարակական գիտություններ, 1989, թիվ 3, էջ 79:

41 **Շամախեցի,** Թրքամոլություն թե թրքասիրություն, Թիֆլիս, 1920, էջ 12:

42 ՀՀՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 4, թ. 97:

Պյոտր Արտամոնովի գլխավորությամբ շամախեցի զինվորները, թվով 1300 հոգի, կրկին անգամ փորձում են անցնել Շամախի[43]: Սակայն մուսավաթ կուսակցությունը, իր էմիսարների միջոցով գավառում տարածելով այն ստահոդ լուրերը, թե իբր հայ զինվորների Շամախի գալու նպատակը միայն կրում է ազգային հակաթուրքական բնույթ»[44], սկսեցին եռանդագին գրգռել թուրք անգետ ազգաբնակչությանը: Ազգամիջյան բախումների հրահրողներից էր նաև մուսուլմանների հոգևոր առաջնորդ, անդրկովկասյան Մուֆտի Մուստաֆա Էֆենդին: Կաթողիկոսին իրազեկ պահելով Շամախիում կատարվող դեպքերի մասին, Բագրատ եպիսկոպոսը հետևյալ նկարագիրն է տալիս նրա մասին. «Նա (Մուֆտի Մուստաֆա Էֆենդին—Գ. Ստ.) գլխավոր կողմնակիցն ու ջերմ աշխատողն էր տաճկական տիրապետության արագացման, որի համար աշխատում էր գաղտնի ու հայտնի միջոցներով զինել թուրք ժողովրդին ու զինվորներին»[45]: Տեսնելով, որ Շամախիում հայ-թուրքական նոր ընդհարումները ակնհայտ են, Բագրատ եպիսկոպոսը մեծ ջանքերի գնով կազմակերպում է մի խաղաղարար հանձնախումբ, որի նախագահներն էին ինքը և Մուֆտի Մուստաֆա Էֆենդին[46]: Հանձնախմբի նպատակն էր հայ զորքերի վերադարձը տուն կազմակերպել այնպես, որպեսզի տեղիք չտար ընդհարումների[47]: Սակայն հանձնախումբը չկարողացավ իրագործել իր նպատակները, քանզի խաղաղասեր ներկայացող Մուֆտի Մուստաֆա Էֆենդին և մուսուլմանական քարոզիչները արդեն սկսել էին իրենց սև գործը: Մարտի 15-ին թուրք խուժանը զենք ձեռք բերելու նպատակով հարձակվում է կայազորի վրա, սպանելով մի քանի հայ զինվորների, այնտեղից գրավում է մեծ քանակությամբ զենք[48]: Սկսված բախումների ընթացքում Շամախի քաղաքում գտնվող 45—50 հայ զինվորների շնորհիվ հնարավոր է լինում պաշտպանվել մինչև երեկո: Այդ ամբողջ ընթացքում Բագրատ եպիսկոպոսը և Շամախիի քաղաքագլուխը, շրջելով քաղաքի փողոցներով, փորձում էին հաշտություն քարոզել կռվող կողմերի միջև[49]: Հայ զինվորները, տեսնելով թուրքերի նման գազանություններն ու թշնամական վերաբերմունքը, հուժկու գրոհով մարտի 18-ին գրավում են Շամախին: Գանձակից թուրքերին օգնության եկած մուսուլմանական «վայրի դիվիզիան» և նրան միացած Գոյկչայի թուրքական ջոկատները հարձակվում են հայկական գյուղերի վրա: «Թալանում ու այրում են Ղաջար, Սաղիան գյուղերը, շրջապատում Մադրասան, որտեղ ժողոված են լինում մոտ 12 հազար հայեր, որոնց հաջողվում է գիշերը փախչել, նրանց մի մասն էլ ճանապարհին բռնվում են թուրքերի կողմից և կոտորվում», գրում է Բագրատ եպիսկոպոսը կաթողիկոսին[50]: Այդ նույն ժամանակ Մադրասայի հայկական զինվորական շտաբից Բագրատ եպիսկոպոսը ստանում է նամակ, որտեղ նրանից օգնություն էին խնդրում: Նամակում ասվում էր հետևյալը.

---

43 **Ե. Ա. Քահ. Գեղամյանց,** Տաճիկները Կովկասում և Բագուի անկումը, Բաքու, 1919, էջ 79:

44 ՀՀՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 97:

45 ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 6:

46 **Ե. Ա. Քահ. Գեղամյանց,** նշվ. աշխ., էջ 79:

47 Նույն տեղում:

48 ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 7:

49 **Ե. Ա. Քահ. Գեղամյանց,** նշվ. աշխ., էջ 82:

50 ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 8:

«Սաղիանից թուրքերը գալիս են Մադրասայի վրա: Զարխուն և Միրիշեն հայկական գյուղերն այրվում են: Մեզ մոտ են հավաքվել շրջակա հայ գյուղերի մարդիկ: Մեր թնդանոթներից մեկը արդեն ընկել է թշնամու ձեռքը: Հույս չկա Մադրասան ազատելու»[51]: Ելնելով նման իրավիճակից, Բագրատ եպիսկոպոսը մարտի 26-ին, ժամը 12-ին, կազմակերպում է Շամախիի քրիստոնյա ազգաբնակչության գաղթը դեպի Ղուբա գավառի մալականների գյուղերը՝ ազատելով նրանց թուրքական սպասվող կոտորածներից[52]: Մտնելով Շամախի, թուրքերը գազանաբար հիմնահատակ են անում ու այրում կոնսիստորիան, առաջնորդարանն ու հայոց դպրոցը[53]: Հետագայում, 1918 թ. նոյեմբերին, Բաքվի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու Ներսես ավ. քհն. Տեր-Կարապետյանցը, նամակով Էջմիածնի Սինոդի անդամ Տիրայր եպիսկոպոսին ներկայացնելով Շամախիի դեպքերը, գրում էր. «Ամբողջ կոնսիստորիան յուր (խոսքը Բագրատ եպիսկոպոսի մասին է—Գ. Ստ.) անհոգության շնորհիվ այրվեց և մոխիր դարձավ»[54]: Մեր կարծիքով նման մեղադրանքը Բագրատ եպիսկոպոսի հասցեին անհիմն է և չի համապատասխանում պատմական իրականությանը, քանզի, ինչպես ցույց են տալիս վերոհիշյալ իրադարձությունները և վավերագրերը, Շամախիում հայ-թուրքական ընդհարումների օրերին Բագրատ եպիսկոպոսը, որպես հայոց թեմի առաջնորդ, միշտ մտահոգ է եղել և ուժերի ներածին չափով աշխատել է հայությանը փրկել թուրքական կոտորածներից: Հետագայում տեսնելով Շամախիում տիրող ծանր վիճակը, բանվորական խորհուրդը Բաքվից 700 հոգուց բաղկացած մի գումարտակ է ուղարկում Շամախի, Թադեոս Ամիրյանի գլխավորությամբ, որպեսզի այնտեղ խաղաղություն հաստատի[55]: Անդրադառնալով Շամախիում տիրող իրադարձություններին «Հորիզոնը» գրում էր. «Քյուրդամիր կայարանից հեռագրում են, որ Շամախիում ընդհարում է սկսվել զինվորների և տեղական ազգաբնակչության միջև, պահանջվում է օգնություն: Բաքվից Շամախի են մեկնել զորամասեր»[56]: Թադեոս Ամիրյանին հաջողվում է գրավել Շամախին և այրել թուրքական թաղը:

Շամախիի թուրքերի խռովությունը ճնշելուց հետո, փախստական շամախեցի քրիստոնյա ազգաբնակչությանը Բագրատ եպիսկոպոսը նորից տեղափոխում է այնտեղ: «Ես ևս վերադառնում եմ Շամախի և մոտ 2 և կես ամիս ապրում եկեղեցու նախագավթում, աշխատելով թեթևացնել սնանկացած ու քայքայված հայ գյուղացիների ծանր վիճակը, որոնց մեծ մասը Խիլմիլի գյուղում հիվանդացել էր սննդի պակասության և հակասանիտարական պայմանների պատճառով»—գրում էր Բագրատ եպիսկոպոսը կաթողիկոսին ուղղված զեկուցագրում[57]: Հետագայում, Բաքուն գրավելուց հետո, սեպտեմբերյան հայկական կոտորածները արդարացնելու նպատակով, ադրբեջանական իշխանությունները գրում էին. «Եթե քաղաքը գրավելու ժամանակ եղել են կոտորածի դեպքեր, որը անպայման պետք է ստացվեր,

---

[51] **Ե. Ա. Քահ. Գեղամյանց**, նշվ. աշխ., էջ 87, 88:
[52] ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 6:
[53] Նույն տեղում:
[54] Մաշտոցի անվ. Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թ. 126, վ. 300:
[55] **Ս. Մելիք Յոլչյան**, Բագուի հերոսամարտը, «Հայրենիք» 1925, թիվ 7, էջ 106;
[56] «Հորիզոն», 1918, մայիս 22, թիվ 105:
[57] ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 6—7;

ապա այդ տրամադրվածությունը գալիս էր մարտ ամսվա կոտորածներից, երբ հայերը բոլշևիկների տեսքով Բաքվում և Շամախիում կոտորեցին 10 հազար մուսուլմանի»[58]: Բագրատ եպիսկոպոսը, ելնելով վերոհիշյալից, նոյեմբերի 23-ին զեկուցագիր է ներկայացնում դաշնակից զորքերի հրամանատար գեներալ-մայոր Թոմսոնին, որտեղ արտահայտում է իր զայրույթը ադրբեջանական իշխանությունների նկատմամբ, որոնք փորձում էին սեպտեմբերյան հայկական կոտորածները կապել մարտյան իրադարձությունների հետ: Գրելով, որ «այդ երկպառակություններին (խոսքը մարտյան իրադարձությունների մասին է—Գ. Ստ.) հայ զինվորների մասնակցությունը եղել է բացառապես այն մուսուլմանների դավաճանական վարքագծի պատճառով, որոնք թիկունքը և ռուս-թուրքական ռազմաճակատը քայքայելու նպատակով հայերի առջև փակել էին բոլոր ճանապարհները և Թիֆլիս-Բաքու ճանապարհին վագոններից քաշում-հանում էին անգամ խաղաղ, անզեն հայերին և նրանց գազանաբար մորթում ուղևորների աչքի առաջ»[59]:

Անհաջողություն կրելով Արևելյան Հայաստանում 1918 թ. մայիսյան հերոսամարտերի ընթացքում և կորցնելով շուրջ 7 հազար կռվող[60], թուրքերը սկսեցին տենդագին նախապատրաստվել Բաքուն գրավելու համար: «Զուգելով թանկագին ժամանակը վատնել և հայերիս հետ հաշվեհարդարը ետքի ձգելով, տաճիկ բանակը շարունակեց իր ճամփան, հունիսի վերջը Նուրի փաշան արդեն Ելիզավետպոլ էր 13 հազար թրքո-թաթար բանակով մը պատրաստ՝ քալելու Բաքվի վրա», գրում է Զարևանդը[61]: Բաքվի գրավումը, ինչպես գրում էր Իրազեկը, «Ուժգին բարոյական ու ռազմական, նաև տնտեսական նշանակություն ուներ Տաճկաստանի համար: Բաքվում հաստատվելով՝ նախ և առաջ տեր էր դառնում նրա անսպառ նավթին, որ օդի չափ անհրաժեշտ էր իրեն բոլոր տեսակետից, մանավանդ իր ռազմական պահանջի համար: Երկրորդ, մոտենում էր և անմիջական շփման մեջ էր մտնում ասիական ծով մահմեդականության հետ, որից տնտեսական կարելիություններ էր սպասվում»[62]:

Բաքվի պաշտպանությունը, որ առանձնահատուկ տեղ էր գրավում առաջին աշխարհամարտի պատերազմական գործողությունների մեջ, ունեցավ պատմական մեծ նշանակություն ինչպես պատերազմի ավարտի, այնպես էլ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության ապագա ճակատագրի համար: Երիցս ճիշտ էր Ռոստոմի (Ստեփան Զորյան) ելույթը Բաքվի հայոց Ազգային խորհրդի նիստում, երբ քննարկվում էր Բաքվի պաշտպանության խնդիրը: «Վաղը հենց որ բացվեն Բագուի դռները Ադրբեջանի բանակի առջև և տաճիկները տեղավորվեն Բագվում, Խան-Խոյսկու ամբոխը և տաճկական բանակը, ձեռք-ձեռքի տված պիտի արբեն նաև Բագուի և Գանձակի հայությանը, ապա պիտի բարձրանան Ղարաբաղ, պիտի իջնեն

---

58 ՀՀՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 41:

59 Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբ., կազմողներ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Երևան, 1991, էջ 634:

60 **Ս. Աֆանասյան**, Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, մայիս 1918), Երևան, 1991 էջ 76:

61 **Զարևանդ**, նշվ. աշխ., Երևան, 1993, էջ 104:

62 **Յ. Իրազեկ**, Մոտիկ անցյալից (Պատմական դեպքեր և ապրումներ, 1917—1922), Բեյրութ, 1956, էջ 25:

Զանգեզուր և Երևանը ոտնատակ պիտի տան»[63]: Հայության համար օրհասական այդ պահին Բաքու էին մեկնել նաև Սեբաստացի Մուրադն ու Սեպուհը՝ մասնակցելու ինքնապաշտպանությանը: Ստեփան Շահումյանը նրանց ընդունելով ասել էր հետևյալը. «Կլսե՞ք թնդանոթներու այդ որոտը, թշնամին կաշխատի գրավել Բաքուն, որմե հետո պիտի հարձակվի այն փոքրիկ ժողովրդին վրա, որ քաշված է Երևանի շուրջը և շնչահեղձ կտառապի: Պաքուն պաշտպանելը կնշանակե Երևանի հանրապետության գոյության սատարել: Եթե այս քաղաքն իյնա, իր հետ պիտի կորսվի նաև հայ ժողովուրդն ու անոր նորահաստատ հանրապետությունը»[64]: Բաքվում,—գրում է Լ. Խուրշուդյանը, «որտեղ հաստատվել էր սովետական իշխանություն և Անդրկովկասի մյուս շրջանները այդ ժամանակ ունեին մեկ ընդհանուր թշնամի՝ Թուրքիան: Ահա այդ ընդհանուր թշնամու ուժերի ջախջախման համար էր, որ պետք է միավորվեին երկրամասի բոլոր ուժերը»[65]: Այսպիսով, Բաքվի հերոսական ինքնապաշտպանությունը մի հուսահատ փորձ էր կանգնեցնելու թուրքական հրոսակների առաջխաղացումը: Եվ ելնելով վերոհիշյալ հանգամանքներից, հայության գոյությունը պաշտպանելու գերխնդիրը լուծելու համար, Հայոց Ազգային խորհուրդն ու Հ. Հ. Դաշնակցությունը, որոնց տրամադրության տակ էին գտնվում զուտ հայկական ուժերը, ինքնապաշտպանության սկզբնական շրջանում համագործակցեցին բոլշևիկների հետ, որոնք նույնպես ձգտում էին թույլ չտալ թուրքական զորքերի մուտքը Բաքու: Բաքվի պաշտպանությունը հնարավորություն տվեց նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը խուսափել թուրքական բանակի նոր արշավանքներից: Դրանով իսկ Թուրքիան չհաջողեց իրականացնել իր պանթուրքիստական ծրագրերը: Բաքվի հայությունը հերոսական կռիվների բովով վաստակեց այն թանկագին ամիսները, որոնք անհրաժեշտ էին Մայր հայրենիքի փրկության համար: Պատրաստվելով դիմակայել թուրքական արշավանքին, Բաքվի զորքերը կազմված էին 4 բրիգադից, որոնք միավորվել էին մեկ կորպուսում[66]: Կորպուսում եղած 22 գումարտակների զինվորների թիվը հասնում էր 18 հազարի: «Իրադարձությունները Բաքվում» վավերագրի հեղինակ 4-րդ բրիգադի հրամանատար գնդապետ Հարությունովը հետևյալ կերպ է ներկայացնում կորպուսի կազմը. «Միայն դրոշն էր բոլշևիկյան, իրականում հայ զինվորները կազմում էին 95 տոկոս: Եվ համարյա 100 տոկոս հայ սպաներ», այնուհետև շարունակում է. «որովհետև մեր նպատակները համընկնում էին բոլշևիկների հետ, հաշվի առնելով ընդհանուր թշնամուն: Այդ պատճառից ելնելով մենք մտնում ենք նրանց մոտ ծառայության»[67]: Թշնամու հարձակումը Բաքվի վրա կասեցնելու նպատակով 1918 թվականի հունիսի 10-ին Ռոստոմ Զորյանի նախաձեռնությամբ Բաքվի զորքերը թվով 10 հազար հոգի Գանձակի ուղղությամբ անցնում են հարձակման[68]: Համառ կռիվներից հետո Բաքվի զորքերը սկզբնական շրջանում ունենում են մի քանի հաջողություններ: Սակայն Գյոկչայի տակ հու-

---

[63] **Ռոստոմ**, Բեյրութ, 1979, էջ 326:

[64] **Սեպուհ**, Էջեր իմ հուշերեն, հ. Բ, Բոստոն, 1929, էջ 164:

[65] **Լ. Խուրշուդյան**, Սովետական Ռուսաստանն ու հայկական հարցը, Երևան, 1977, էջ 110—111:

[66] ՀՀՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 14:

[67] Նույն տեղում:

[68] Նույն տեղում:

նիսի 27—30-ը տեղի ունեցած կռիվներից հետո թուրքերը ստանալով նորանոր համալրումներ, արագ թափով անցան հակահարձակման: Եվ սկսվեց անկանոն նահանջը, որի հիմնական պատճառները, ինչպես վկայում են արխիվային վավերագրերը, «պակասում էր ռեզերվը, ռազմամթերքը, ջրի բացակայությունից սկսվել էր խոլերայի և այլ համաճարակների տարածում»[69]: Չկարողանալով դիմակայել թուրքական զորքերի հարձակմանը, հերոսական կռիվներով կոմունայի զորքերը հուլիսի 20-ին հանձնում են Շամախի քաղաքը: «Այդ օրերին գնդապետ Ղազարովից ստացվեց հաղորդումներ, որ թուրքական մեծ ուժերի հարձակման պատճառով չի կարողանում դիմանալ և հանձնում է քաղաքը[70]: Մարտյան իրադարձություններից հետո Շամախի հայությունը, որ դեռ չէր հասցրել ուշքի գալ և զբաղվել շինարար կյանքով, լսելով թուրքական զորքերի մոտենալը քաղաքին, կրկին անգամ բռնեց գաղթի ճանապարհը: Գաղթի կազմակերպման ողջ աշխատանքները իր վրա վերցնելով Բագրատ եպիսկոպոսը, շամախեցիներին և նրանց միացած Գյոկչայի հայությունը գաղթում են Բաքու[71]: Գաղթական շամախեցիներին և Գյոկչայի հայությանը վիճակված էր ողջ ճանապարհին կրել անհավոր զրկանքներ ու հալածանքներ: «Ճանապարհին հայ ժողովուրդը մեծամեծ զրկանքների ու գազանությունների է ենթարկվում, բազմաթիվ դիակներ թողնում, մի քանի հարյուր հոգի գերի են ընկնում, որոնք անհայտանում էին», գրում էր Բագրատ եպիսկոպոսը կաթողիկոսին[72]: Անգլիական մամուլը այդ օրերին, անդրադառնալով հայության ծանր վիճակին, գրում էր. «Թուրքերը 8 հազար հայեր տեղահանած են Ալեքսանդրապոլեն, Գանձակը զինաթափ ըրած են, Գյոկչայի ու Շամախիի հայերը գաղթած են Բաքու»[73]:

Սեպտեմբերի 15-ին թուրք մուսավաթական ուժերը համառ մարտերից հետո ներխուժեցին Բաքու: Նույն օրը, առավոտյան, դիրքերը թողեցին նաև Բաքվին իբր «օգնության» եկած անգլիական ուժերը: Բաքվի վերջին կռիվների ընթացքին անդրադառնալով, «Ժողովուրդը» գրում է. «Թուրքական զորքերը մեծ կորուստներ են ունեցել Բագվի վերջին կռիվներին, մինչև Բագու փոված են անթիվ-անհամար դիակներ, որոնց թիվը հասնում է հազարների»[74]: Բաքու առաջինը ներխուժած զորամասերը և թաթարական ավազակախմբերը, որոնք չնայած Մուրսել փաշայի տված «խաղաղ բնակչության անձնական և գույքի ապահովության» երաշխիքներին, տեղական թաթարական բնակչության հետ երեք օրվա ընթացքում թալանեցին և կոտորեցին հայ խաղաղ բնակչությանը: Թալանը, բռնությունը, բռնաբարությունը, սպանությունը թուրքերի և թաթարների սովորական արհեստն էր: Կոտորվեց մոտ 30 հազար անմեղ հայ, չորրորդ օրը Մուղանի անապատները քշվեցին և կոտորվեց 800 հայ տղամարդ, Բաքվում և նահանգում սպանվածների թիվը հասավ 50 հազարի», գրում է Հ. Ավետիսյանը[75]:

---

69 Նույն տեղում, թ. 2—11:

70 Նույն տեղում, թ. 53—54:

71 «Արև», 30 հուլիսի, թիվ 148:

72 ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 6:

73 **Տ. Տիգրանյան**, Անգլիան և հայերը, Երևան, 1994, էջ 160:

74 «Ժողովուրդ», 3 հոկտեմբերի 1918, թիվ 15:

75 **Հ. Ավետիսյան**, Երիտասարդ թուրքերի և մուսավաթի համաթուրքական գործակցությունը և հակահայ ոճրագործությունը, 1918 թ., Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1991, թիվ 1, էջ 59:

Բաքվի իրադարձությունների մասին զեկուցելով կաթողիկոսին, Բագրատ եպիսկոպոսը գրում էր. «Զորքերը Բաքու մտնելուց հետո սկսում է սոսկալի կոտորած, գազանությունները և թալանը շարունակվում է երեք օր»[76]: Թուրքական զորքերի վայրագություններին էր միացել նաև քրդական ջոկատները: «Քաղաքում առաջին հերթին բաց էին թողել քրդական և թաթարական ջոկատները, որոնք երեք օր իրադրության տերերն էին»[77]: Կոտորածներից և բռնություններից զերծ չմնաց նաև Բաքվի հայ մտավորականությունը: Հավատարիմ մնալով իրենց ավանդական քաղաքականությանը, ինչպես 1915 թվականին, այս անգամ ևս թուրքերը, քաղաքը գրավելուց հետո, սկսեցին մասսայական ձերբակալել նրանց, որոնք ուղեկցվում էին հալածանքներով, մոտ 400 մտավորականներ գտնվում են բանտերում՝ զրկված լինելով օգնությունից[78]: Հետագայում թուրքական հրամանատարությունը, հանձին Նուրի փաշայի, փորձելով արդարացնել իրենց կատարած վայրագությունները, հայտարարում էին այն անմիտ պատճառաբանությունը, թե իբր «կոտորածների պատճառն այն էր, որ քաղաքի ազգաբնակչության պաշտպանության համար նշանակված զորամասը իր պաշտոնը չի կատարել»[79]: Թուրքական զորքերի ոճրագործության հաջորդ քայլը հանդիսացավ այն, որ սկսեցին եռանդագին քարոզանդ անել և կողոպտել Բաքվի հայկական եկեղեցիները: Կողոպտում են նաև Բագրատ եպիսկոպոսին, ինչպես ինքն է գրում կաթողիկոսին, «թողնելով մի բարակ վերարկուի մեջ»[80]: Զբավարարվելով դրանով, թուրքերը գազանաբար սպանում են Հովհաննես քահանա Նաջարյանին, նրա կնոջը և գյուղական երկու քահանայի[81]: Ներսես ավ. քհն. Կարապետյանցը իր նամակներից մեկում, ուղղված Տիրայր եպիսկոպոսին, անդրադառնալով սեպտեմբերյան անցքերին, գրում է, թե իբր «Բագրատ եպիսկոպոսը սեպտեմբերյան օրերին մեզ լքեց և իր անձը միայն պաշտպանեց դանիական հյուպատոսի տանը»[82]: Մեզ համար, սակայն, ավելի համոզեցուցիչ են արխիվային այն վավերագրի նյութերը, որոնցում Բագրատ եպիսկոպոսի գործունեությունը գնահատվում է ըստ արժանվույն[83]: Բաքվի հայության և ճակատագրին արժանացան Շամախի և Գյոկչա գավառներից գաղթած հայությունը, որոնց, բացի կոտորածներից, սպասվում էր նաև բռնագաղթ: Բռնագաղթի կազմակերպումը ադրբեջանական իշխանությունների և հանձին ներքին գործոց նախարար Զիվանշիրի, հետապնդում էր այն նպատակը, որպեսզի «տեղահանությունների միջոցով գաղթի ճանապարհներին կոտորեին մնացած հայությանը»[84]: Նեցուկ լինելով գաղթականներին, Բագրատ եպիսկոպոսը նրանց հետ կրեց այն բոլոր դժվարությունները, որ սպասվում էր գաղթի ճանապարհներին: Կաթողիկոսին ներկայացնելով գաղթը իր բոլոր մանրամասնություններով, Բագրատ եպիսկոպոսը գրում է. «6200 հոգու չափ Շամախիի և Գյոկչա գա-

---

[76] ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 8:

[77] ՀՀԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ, ց. 1, գ. 235, թ. 6:

[78] ՀՀՀՔԿՓՊԿԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 974, թ. 1:

[79] «Ժողովուրդ», 1918, դեկտեմբերի 18, թիվ 46:

[80] ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 3, գ. 280, թ. 1:

[81] ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 7:

[82] Մաշտոցի անվան Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թ. 126, վ. 273:

[83] ՀՀՊԿՊԱ, ֆ. 150, ց. 1, գ. 25, թ. 46—47:

[84] ՀՀՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 414, թ. 208:

վառների գյուղացիները մեծամասնությամբ ծերեր, կանայք, երեխաներ, ասկյարների հսկողության տակ հոկտեմբեր ամսին ուղարկում են: Ճանապարհին կրկին թալանում, անարգում են մի քանի հայ կանանց ու աղջիկներին փախցնում են թուրքերը, որոնց տանջելով հասցնում են գյուղերը»[85]: Ելնելով Շամախիում տիրող ծանր կացությունից, Բագրատ եպիսկոպոսը վիճակային կոնսիստորիան հոկտեմբերի 16-ին տեղափոխում է Բաքու: Իր այդ քայլը կաթողիկոսին ուղղված զեկուցագրում նա հետևյալ ձևով է պատճառաբանում. «Քանի որ քաղաքը ամբողջովին այրված է և ոչ մի հայ չի ապրում, գավառում էլ հազիվ 3 հազար հոգի է մնացել, և որպեսզի ոչ մի թյուրիմացություն տեղի չունենար Ադրբեջանի կառավարության կողմից և ավելի նշանակություն ունենար բանակցության ժամանակ[86]: Բաքվում, որտեղ կոտորածներից փրկված հայությունը գտնվում էր դժոխային պայմաններում, օրեցօր ավելանում է մահացության թիվը, որի հիմնական պատճառներից էր սովը: «Օրական տասնյակներով որբեր են մեռնում անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով»[87]: Մտահոգ Բաքվում հայ գաղթականների, որբերի և աղետյալների ճակատագրով, հոկտեմբեր ամսում Բագրատ եպիսկոպոսը իր նախագահությամբ հիմնում է «Հայոց ինքնօգնության կոմիտե»[88]: Կոմիտեին կից գործում էր նաև հայ անկետային հանձնաժողովը[89], Բախշի Իշխանյանի գլխավորությամբ, որը մինչև դաշնակից զորքերի Բաքու մտնելը, գաղտնի պայմաններում նյութեր էր հավաքում սեպտեմբերյան անցքերի վերաբերյալ: Կոմիտեի աշխատանքները արդյունավետ դարձնելու նպատակով, նամակով նա դիմում է Վրաստանում Հայաստանի հավատարմատար Ջամալյանին՝ խնդրելով նրանից ֆինանսական օգնություն: Ջամալյանը նույնպես մտահոգ Բաքվի աղետյալների ճակատագրով, դիմում է Վիրահայոց Ազգային խորհրդին և փոխարինաբար խնդրում 500 հազար ռուբլի: «Նկատի ունենալով, որ ըստ Հայոց ինքնօգնության կոմիտեի նախագահ Բագրատ եպիսկոպոսի գրության այնտեղ (Բաքվում— Գ. Ստ.) ուղղակի անտանելի է»[90]: «Հայոց ինքնօգնության կոմիտեն», որի գործունեությունից էր կախված Բաքվի աղետյալների հետագա ճակատագիրը, ադրբեջանական իշխանությունները ամեն կերպ խոչընդոտում էին նրա աշխատանքները և ստեղծում արհեստական դժվարություններ: Այսպես, հայ գաղթականության, աղետյալներին և որբերի օգնության գործին աշխատավորական լայն մասսաներին մասնակից դարձնելու նպատակով, Բագրատ եպիսկոպոսը, որ թույլտվություն էր ստացել հայտարարությամբ հանդես գալու «Ադրբեջան» և «Կասպի» թերթերում, այդպես էլ չիրականացավ, քանզի լույս տեսած թերթերում «հայտարարության տեղը սպիտակ էր»[91]: Հանդուրժելով իրեն և հայությանը ուղղված նման վիրավորանքը, Բագրատ եպիսկոպոսը բողոք-նամակ է հղում Ադրբեջանի ներքին գործոց նախարարին, որտեղ գրում է. «Նման վերաբերմունքը հայոց եկեղեցիների եպիսկոպոսի նկատմամբ ցավոք սրտի այն ուղղված է նաև ողջ հայ ժողովրդ-

---

85 ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 3—4:
86 Նույն տեղում:
87 ՀՀՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 79:
88 Նույն տեղում, թ. 76:
89 Բ. Իշխանյան, Բագուի սարսափները, Թիֆլիս, 1920 թ., էջ 12:
90 ՀՀՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 76:
91 ՀՀՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 54:

դին»[92]: Երկու ամսվա ընթացքում թուրք-ադրբեջանական իշխանությունները միայն վարեցին հակահայ քաղաքականություն: Ինչպես վկայում է Բախշի Իշխանյանը, «Բանտերը լիքն էին հայ մարդկանցով, անկախ նրանց տարիքից»[93]: Ընդ որում գերությունից ազատվել էին մնացյալ ազգերի ներկայացուցիչները[94]:

Ելնելով վերոհիշյալից, Բագրատ եպիսկոպոսը իր բողոքն էր հղում Ադրբեջանի մինիստր նախագահ Ֆ. Խան Խոյսկուն և պահանջում նրանից գերիներին, որոնց թվում նաև հայ անվանի մտավորականությանը, անհապաղ ազատել[95]: Բաքվում հայ ազգաբնակչության իրավունքների ոտնահարման, նրանց ազգային արժանապատվությունը վիրավորելու պատճառով Բագրատ եպիսկոպոսը բողոք-նամակ է հղում Նուրի փաշային հետևյալ խնդրով, «որպեսզի հայ աղետյալները ցուցակներ ներկայացնելով ետ ստանան իրենց բոլոր իրերը, ինչ բռնագրավվել էին իրենցից»[96]:

Բաքվի ազգային խորհուրդը, հաշվի առնելով Բագրատ եպիսկոպոսի լայն հասարակական գործունեությունը և նրա հեղինակությունը նահանգում, դեռևս սեպտեմբեր ամսից նրան ընդգրկել էր խորհրդի կազմում: Հետագայում իրերի բերումով նա դառնում է նրա պատվավոր նախագահը[97]: Դաշնակից զորքերի Բաքու մտնելուց հետո (նոյեմբերի 17), Բագրատ եպիսկոպոսը զեկուցագիր է ներկայացնում հրամանատար Թոմսոնին, որտեղ հանգամանալից նկարագրում է հայության վիճակը նահանգում 1918 թ. սկզբից մինչև դաշնակից զորքերի քաղաք մտնելը[98]: Թոմսոնի կարգադրությամբ ստեղծվում է «Վերահսկողության կոմիտե դաշնակցային հրամանատարության ներքո, որի նպատակն էր՝ «ընդունել և քննել միայն Բաքվում տաճիկների հասցրած վնասների ցուցակները»[99]: Բագրատ եպիսկոպոսը ներկայացնում է եկեղեցիների և Սաղիանի վանքի կրած վնասների ցուցակները կոմիտեին, ըստ որի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի 270220 ռ., Սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս՝ 88740 ռ., Սուրբ Թարգմանչաց՝ 37740 ռ., Սաղյանի վանքը՝ 56000 ռ.»[100]:

Բաքվի եկեղեցիների կրած ընդհանուր վնասները գնահատվում էին 637050 ռուբլի[101]:

Հետագայում, 1920 թվականին, արդեն արքեպիսկոպոս Բագրատ Վարդազարյանը, ընտրված լինելով Էջմիածնի Սինոդի անդամ, թողնում է Բաքուն, որտեղ անցկացրել էր թեմական առաջնորդի փորձություններով լի 5 տարիներ[102]:

Վերարժեքավորելով այսօր Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանի հոգևոր-հասարակական գործունեությունը Բաքվի նահանգում 1918 թվականի թուրք-մուսավաթականների արշավանքի ժամանակ, գալիս ենք այն հա-

---

92 Նույն տեղում:
93 Բախշի Իշխանյան, Բագուի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920, էջ 66:
94 ՀՀՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 98:
95 ՀՀՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 53:
96 Նույն տեղում:
97 ՀՀՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 116:
98 Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում... էջ 625—636:
99 ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 189, թ. 7:
100 ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 189, թ. 7:
101 Նույն տեղում:
102 ՀՀՊԿՊԱ, ֆ. 278, ց. 1, գ. 32, թ. 84:

մոգման, որ Բաքվի հայության համար օրհասական այդ օրերին նա կարողացավ լինել նրա նեցուկն ու հիրավի հոգևոր առաջնորդը: Յուրովի գնահատական է տվել նրան Միսակ (Արամայիս) Տեր-Դանիելյանը՝ ասելով՝ «Անհատ հոգևորականներից շատերին եմ հարգել, որպես պատմագրի, բանաստեղծի, անձնվեր ուսուցչի և գործչի, կամ էլ հենց սոսկ իբրև լավ մարդու: Դրանց թվում է՝ Բագրատ եպիսկոպոսը»[103]:

ԳԵՎՈՐԳ ՍՐԱՊԻՈՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

---

103 ՀՀՊԿՊԱ, ֆ. 150, ց. 1, գ. 25, թ. 46—47: